



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2018թ. նոյեմբերի 26-ին, N 134
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակի հ. 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 23-ի գրությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին» N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 4-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Աշտարակի հ. 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում «Շմավոնյան Դեմա» և «Ավագյան Լիլի» բառերը համապատասխանաբար փոխարինել «Հարոյան Օժենյա» և «Մհերյան Հոփսիմ» բառերով:

Ժամանակավոր
պաշտոնակատար

Զիշխաբ

Գ. ԱԹԱՆԵՍՅԱՆ

